Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Քարաշենի Լ. Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Ֆիզկուլտուրայի (5 դասաժամ), հասարակագիտության (7,5 դասաժամ), տնտեսագիտութան (2 դասաժամ), ինֆորմատիկայի (6 դասաժամ), բնագիտության (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ. սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա Քարաշենի Լ. Սարգսյանի անվան միջն. դպրոցում՝ **2022 թ. հոկտեմբերի 13-ին ժամը 12:00-ին՝ ինֆորմատիկա**, **ժամը 13:00-ին՝ բնագիտություն, ժամը 14:00-ին՝ տնտեսագիտութուն, հասարակագիտություն, ժամը 15:00-ին՝ Ֆիզկուլտուրա** (հասցե՝ գ. Քարաշեն փ.10, շ.13): Տեղեկությունների համար զանգահարել 077-990-135 հեռախոսահամարով: